

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբեր 2018



Բովանդակություն

Բովանդակություն	1
Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր.....	2
Ֆինանսական դիրք	3
Վարկային պորտֆել և համեմատականներ	4
Տրամադրված վարկերի ծավալը	4
Տրամադրված վարկերի քանակը	4
Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ	6
Վարկերի կառավարում	7
Վերլուծական գործակիցներ.....	8


Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր

ՀՀ վարկային կազմակերպությունների միության անդամներն իրենց տնտեսական գործունեության վերաբերյալ ՀՀ վարկային կազմակերպությունների միությանն (ՀՀ ՎԿՄ) ամսական կտրվածքով տրամադրում են տասը տնտեսական ցուցանիշներ: Այդ ցուցանիշների հիման վրա Վարկային կազմակերպությունների միությունն իրականացնում է ֆինանսական վերլուծություն, որի նպատակն է միության անդամներին ներկայացնել վարկային ինդուստրիայում տեղի ունեցող տնտեսական շարժերը: Ցուցանիշների մի մասը հրապարակային տեղեկատվություն է, որոնք տեղ են գտնում վարկային կազմակերպությունների կողմից ներկայացվող եռամսյակային հաշվետվություններում: Սակայն սույն վերլուծության համար ՎԿՄ-ի անդամ կազմակերպությունների կողմից տրամադրվում են նաև այնպիսի տնտեսական ցուցանիշներ, որոնք տեղ չեն գտնում հրապարակային եռամսյակային հաշվետվությունների մեջ:

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿՄ անդամների համախառն ակտիվները 2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 146 մլրդ դրամ՝ 2017թ.-ի դեկտեմբերի նկատմամբ աճելով 13.6%-ով, իսկ 2018թ.-ի նոյեմբերի նկատմամբ՝ 1.2%-ով (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿՄ անդամների վարկային պորտֆելը 2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 116 մլրդ դրամ՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ աճելով 6.9% -ով, իսկ 2018թ. նոյեմբերի նկատմամբ՝ 3.1% -ով:
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿՄ անդամների ընդհանուր կապիտալը 2018թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 45.5 մլրդ դրամ՝ 2017թ.-ի դեկտեմբերի նկատմամբ աճելով 6.8%-ով, իսկ 2018թ.-ի նոյեմբերի նկատմամբ նվազելով 0.5%-ով:

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿՄ անդամների ֆինանսական դիրքը 2017-2018թթ.-ների դեկտեմբերի վերջի դրությամբ




Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2018թ.-ի դեկտեմբեր ամսին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրվել է 13.5 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 10%-ով, իսկ 2018թ.-ի նոյեմբերի նկատմամբ աճել 17.7%-ով (Գծ. 2):

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին տրամադրված վարկերի ծավալը




Տրամադրված վարկերի քանակը


- 2018թ.-ի դեկտեմբեր ամսին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրվել է 21,572 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 30.4%-ով, իսկ 2017թ.-ի դեկտեմբերի նկատմամբ նվազել 3.9%-ով (Գծ. 3):

- 2018թ.-ի դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամներն ունեցել են 149,245 ակտիվ վակառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2017թ.-ի դեկտեմբերի նկատմամբ աճել է 1.5%-ով, 2018-ի նոյեմբերի նկատմամբ՝ 0.4%-ով:
- ՀՀ ՎԿՄ անդամների կողմից 2018թ.-ի դեկտեմբերին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 626 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 781 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2017թ.-ի դեկտեմբերին կազմել են համապատասխանաբար՝ 669 և 742 հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից հունվար-դեկտեմբեր ամիսներին տրամադրված վարկերի քանակը




Գծապատկեր 4. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2018թ.-ի դեկտեմբերի դրությամբ միության անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 139 մասնաճյուղ, որը, համեմատած 2017թ.-ի դեկտեմբերի հետ աճել է 4-ով:
- ՀՀ ՎԿՄ անդամները 2018թ.-ի դեկտեմբերի դրությամբ ունեցել են 546 վարկային մասնագետ, որը 18-ով նվազել է 2017թ.-ի դեկտեմբերի աշխատակիցների թվի համեմատ:
- 2018թ.-ի դեկտեմբերին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 24.7 մլն դրամ, նախորդ ամսին՝ 21.1 մլն դրամ, իսկ 2017թ.-ի դեկտեմբերին այս ցուցանիշը կազմել է 26.6 մլն դրամ (Գծ. 5):
- 2018թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 213 մլն դրամ, նախորդ ամսվա 208 մլն դրամի և 2017թ.-ի դեկտեմբերի 193 մլն դրամի համեմատ:

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿՄ անդամների միջին վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով




Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿՄ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2018թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 930 մլն դրամ, նախորդ ամսվա 1,039 մլն դրամի և 2017թ.-ի դեկտեմբերի՝ 534 մլն դրամի համեմատ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը աճել է 73.9%-ով, իսկ 2018թ.-ի նոյեմբերի նկատմամբ նվազել է 10.5%-ով: 2018թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 0.8%-ը, 2018թ.-ի նոյեմբերին՝ 0.92% (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿՄ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2018թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 3,526 մլն դրամ, նախորդ ամսվա 3,642 մլն դրամի և 2017թ.-ի դեկտեմբերի՝ 1,823 մլն դրամի համեմատ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը աճել է 93.4%-ով, իսկ 2018թ.-ի նոյեմբերի նկատմամբ նվազել է 3.2%-ով: 2018թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ 30 օրից ավել

Ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 3.03%-ը, 2018թ.-ի նոյեմբերի՝ 3.22%:

- **Զուտ դուրսգրումներ:** 2018թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ միության անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 2,392 մլն դրամ, նախորդ ամսվա 2,060 մլն դրամի և 2017թ.-ի դեկտեմբերի՝ 2,217 մլն դրամի համեմատ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2018թ.-ի դեկտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ աճել է 7.9 %-ով, իսկ 2017թ.-ի դեկտեմբերի նկատմամբ՝ 16.1%-ով: Միության անդամների սույն թվականի դեկտեմբերի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 2.05%-ը, նախորդ ամսվա 1.82%-ի և 2017թ.-ի դեկտեմբերի 0.02%-ի համեմատ:

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿՄ անդամների վարկերի ծավալները դեկտեմբեր 31-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2018թ.-ի դեկտեմբերի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 79.5%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2017թ.-ի դեկտեմբերին կազմել է 84% (Գծ. 7):
- Սույն թվականի դեկտեմբերի դրությամբ միության անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 39.1%: Այս

ցուցանիշը ցույց է տալիս, որ միության անդամների վարկավորման ծավալի մոտ 39.1%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2017թ.-ի դեկտեմբերին կազմել է 39%:

- 2018թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 31.1%, որը վկայում է միության անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2017թ.-ի դեկտեմբերին կազմել է 33%:
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2018թ.-ի դեկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների համար այս գործակիցը կազմել է 2.22, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 2.22 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա դեկտեմբերի համար կազմել է 2.03:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿՄ անդամների վերլուծական գործակիցներ

